ԲԴՄՇ-Ի ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Աշակետական տեխնոլոգիա 2023-2024

Ամենալավ խնամք.

- Ամեն գիշեր լիցքավորել այն
- Տեղ հատկացնել դրա օգտագործման համար
- Ժամանակի սահմանափակում
- Հետևել ճիշտ օգտագործման համար
- Ցանկալի վարքի օրինակ ծառայել

Աշակերտական սարքերի հասանելիություն

Համաշխարհային համաճարկը կտրուկ փոխեց Մ-12-րդ դասարանների կրթության պատկերը: Մեր աշակերտների և ուսուցիչների համար շարունակականություն ապահովելու համար: Շարունակական ծրագրեր գալիք ուսումնական տարվա համար.

- Սարքերի բաշխում 6-12-րդ դասարանցիներին տանը օգտագործելու համար:
  - Աշակերտները պետք է սարքը տանեն տուն և հետ բերեն դպրոց:
- Մ-2-րդ դասարանցիները կօգտվեն դասասենյակի սայլակի սարքերից:
  - Այդ սարքերից կօգտվեն նաև մյուս դասարանների աշակերտները:
- 3-5-րդ դասարանցիները դպրոցում օգտվելու համար սարք կունենան:
  - Դասասենյակի սայլակներ – կ սայլակ՝ մեկ դասասենյակի համար:
- Մ-5-րդ դասարանգիները կարող են պահանջել սարք տնային օգտագործման համար:

Կրթական տեխնոլոգիայի առաքելություն

Մեր առաքելությունն է ապահովել բոլոր աշակերտների հավասար հասանելիությունը տեխնոլոգիայով, որը կբարձրացնի ուսումը, կապահովի արդիական ուսումնական ծրագիրը և կբարելավի ներգրավվածությունը՝ ապահովելով աշակերտների հմտությունները և գիտելիքները քոլեջում, մասնագիտություն ընտրելիս և փոփոխվող ապագայում:

Կրթական տեխնոլոգիայի մտապատկերը

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի մտապատկերն այն է, որ յուրաքանչյուր դասի ընթացքում, աշակերտներն աշխատեն արդի տեխնոլոգիայով, որը կաջակցի և կլրացնի նրանց ուսուցումը: Տարրական դպրոցներում, ԲԴՄՇ-ն անհատական սարքեր կտրամադրի նոթբուկների սայլակների և 6 - 12-րդ դասարանների համար՝ տուն ուղարկվող սարքերի միջոցով: Այս սարքերի նպատակն է ուսուցիչներին և աշակերտներին տրամադրել գործիքներ ուսուցման, հետազոտության, համագործակցության և կրթական այլ կարիքների համար: Միևնույն ժամանակ, ԲԴՄՇ-ն ուսուցիչներին կտրամադրի մասնագիտական վերապատրաստում և տեխնիկական աջակցություն ինչպես սարքերի պահպանման, այնպես էլ կրթական պլանավորման համար:

Մի քանի օգտակար հիշեցումներ ընտանիքների համար՝ նոր տեխնոլոգիան տուն բերելիս.

1. *Որոշ հիմնական կանոններ հաստատեք ձեր երեխայի սարքից օգտվելու համար (օր.՝ սարքից օգտվելը, ամենօրյա լիցքավորումը, պահեստավորումը կամ ուսումնասիրումը):*
2. *Խնդրում ենք հիշել, որ տեխնոլոգիան միայն գործիք է: Որպես մանկավարժ, մենք բազմաթիվ գործիքներ ունենք, և ամեն ինչ չէ որ կկարարվի սարքի միջոցով:*
3. *Օրինակ ծառայեք երեխաների համար, թե ինչպես օգտվել տեխնոլոգիական սարքերից: Արդյո՞ք այն օգտագործվում է դասերի համար և ե՞րբ պետք է անջատել այն:*
4. *Մի վարանեք և օգնություն խնդրեք քույրերից և եղբայրներից, ինչպես նաև դպրոցի աշխատակիցներից և ուսուցիչներից: Խնդրում ենք նամակներն ուղարկել այս հասցեին. athomesupport@burbankusd.org*

ԲԴՄՇ-Ի ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԲԴՄՇ-ի Քրոմբուկի և/կամ թեժկետի օգտագործման պայմանագիր

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը (ԲԴՄՇ) ուսուցողական նպատակներով թույլ է տալիս աշակերտներին օգտվել շրջանի կողմից տրամադրված տեխնոլոգիայից: Այն ենթակա է կրթական գրասենակի կանոնակարգերին, պայմաններին և սահմանափակումներին և ընդունելի է օգտագործման այս պայմանագրով:

ԲԴՄՇ-ն ակնկալում է, որ բոլոր աշակերտները պատասխանատվությամբ օգտվեն տեխնոլոգիայից՝ հնարավոր խնդիրներից և պատասխանատվությունից խուսափելու համար: ԲԴՄՇ-ն կարող է ողջամիտ սահմանափակումներ դնել այն կայքերի, նյութերի և/կամ տեղեկության վրա, որոնցից օգտվում են աշակերտները մեր համակարգի միջոցով: ԲԴՄՇ-ն օգտվում է տեխնոլոգիական պաշտպանության միջոցներից՝ զտելու կամ արգելափակելու մուտքը դեպի անպարկեշտ, պոռնոգրաֆիկ կամ վնասակար տեսողական կամ գրավոր պատկերները, որոնք վնասակար են երեխաների համար: Անհրաժեշտության դեպքում, ԲԴՄՇ-ն կարող է և կվերահսկի առցանց գործունեությունը և մուտք գործելով վերանայել, պատճենել, պահել կամ ջնջել ցանկացած նյութ, հաղորդագրություն և կիսել չափահասների հետ: Օգտվողները չպետք է պահանջեն գաղտնիության պահպանում, երբ օգտվում են շրջանի ցանից, սարքից կամ շրջանի էլեկտրոնային փոստի հասցեից:

Ծնողների տարեկան ծանուցման գրքույկում նշված իրավունքների և պարտականությունների ընդունման բաժնում, ԲԴՄՇ-ի ընտանիքներն ընդունել են, որ գիտակցում են հետևյալը.

1. Աշակերտները պատասխանատու են դրական համացանցային վարք ցուցաբերելու համար:
2. Աշակերտները պատասխանատու են գաղտնի պահել անձնական տվյալները:
3. Աշակերտները պատասխանատու են բանավոր, գրավոր և գեղարվեստական արտահայտման համար:
4. Աշակերտները պատասխանատու են ուրիշների հանդեպ հարգալից և արժանապատիվ վերաբերմունք ցույց տալու համար:
   ա. Աշակերտները չպետք է ուղարկեն և/կամ տարածեն ատելի, խտրականության դնող կամ ոտնձգային հաղորդագրություններ կամ անպատշաճ տեքստեր:
   բ. Աշակերտները պետք է հասկանան, որ ցանկացած տիպի ահաբեկությունն, ներառյալ կիբերհալածանքն, անընդունելի է:

Տնային օգտագործման համար ստացած շրջանի սարքից օգտվելու համար, աշակերտն ու ընտանիքը համաձայն են անել հետևյալը.

1. Հասկացեք, որ այն պետք է օգտագործվի դպրոցի առաջադրանքները կատարելու համա, ինչպես նշված է աշակերտի ընդունելի օգտագործման համաձայնագրում (Student Acceptable Use Policy):
2. Չվաճառել, վարձակալել կամ այլ կերպ որևէ մեկին իրավունք տալ օգտվել այս սարքից:
3. Հետևել շրջանի կանոններին և օրենքներին, որոնք վերաբերվում են սարքի և ծրագրի օգտագործմանը, ինչպես նաև հեղինակային իրավունքին և կիրառվող կանոններին:
4. Հասկացեք, որ ընտանիքը պատասխանատու է սարքի ցանկացած վնասի համար: ԲԴՄՇ-ն կարող է ցանկացած պահի պահանջել, որ սարքն ու ծրագրակազմը վերադարձվեն: ԲԴՄՇ-ի հրամանով կամ պայմանագրի դադարեցմամբ, ընտանիքը պետք է վերադարձնի սարքը շրջանին այն նույն վիճակով, որով այն եղել է պայմանագրի ստորագրման օրը, բացի մաշվածությունը հաշվի առնելով:
5. Դպրոցական շրջանից տեղափոխվող աշակերտները պետք է հետ վերադարձնեն սարքը դպրոցին:
6. Համաձայնվել ընդունել սարքն ու ծրագրակազմն այնպիսին ինչպես կա: Ոչ մի դեպքում, ԲԴՄՇ-ն պատասխանատու չէ աշակերտի կամ ընտանիքի օգտագործման համար:
7. Ընտանիքը պետք է հասկանա, որ սարքիհ հասցված ցանկացած վնաս կամ կորուստ, և գողություն, որը տեղի է ունեցել, նրա պատասխատվությունն է և պետք է անմիջապես հայտնել ոստիկանությանը և դպրոցին: Աշակերտի ընտանիքը պետք է ԲԴՄՇ-ին վճարի սարքի դիմաց (սարքը փոխարինելու համար):

Ես կարդացել և հասկացել եմ այլ համաձայնագիրը: Առանց դպրոցի կողմից տրված այս սարքի, ես կապ և/կամ սարք չեմ ունենա, որով բավարար կերպ կատարեմ հեռակա ուսուցումը տնային պայմաններում:

□ Chromebook □ Declined BUSD Asset Tag # _____

_____	_____	_____
Աշակերտի անուն	Աշակերտի ID #	Դպրոց
_____	_____	_____
Ծնողի անուն	Ստորագրություն	Ամսաթիվ